

# Ժողովուրդ

12  
(2678)

27 հունվարի ուրբաթ 2023  
տպագրության ժԲ տարի

✉ ք. Երևան, Արվյան 22ա/3 (0010)

☎ + 374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԸ ԽԱՔՈՒՄ ԵՆ. ՄԱՍ 11



Կառավարության հունվարի 26-ի նիստում ներքին գործերի նորանշանակ նախարար Վահե Ղազարյանը հայտարարեց, թե Հայաստանում ունենք պատահարների, զոհերի ու վիրավորների թվի նվազում: Նա, մասնավորապես, նշել էր. «2019-ի համեմատությամբ՝ 2022-ին ճանապարհատրանսպորտային պատահարները նվազել են 419-ով կամ 10.2 տոկոսով, 2022 թվականին՝ 4308, 2019 թվականին՝ 4799»: «Փաստերի ստուգման հարթակ»-ը պարզել է, որ Հայաստանում տեղի ունեցած ՃՏՊ-ների վերաբերյալ տվյալները իրականությանը չեն համապատասխանում: Բանն այն է, որ Հայաստանի ճանապարհների տեղի ունեցած գրեթե բոլոր վթարները արձանագրվում են ապահովագրական ընկերությունների կողմից, իսկ այնուհետև փոխանցվում Ավտոապահովագրողների բյուրո: Ըստ այդ տվյալների՝ ՃՏՊ-ների թիվն իսկապես նվազել է, սակայն այն շատ հեռու է նախարարի հնչեցրած թվից: 2021թ.-ին հատուցվել է 25,633 պատահարի վերաբերյալ դիմում, չեն բավարարվել կամ հատուցումից հրաժարվել են 7298-ը: Վահե Ղազարյանի հնչեցրած թիվը մոտ 6 անգամ պակաս է ԱՊՊԱ համակարգում արձանագրված հատուցումների թվից: Սա կարող է նշանակել, որ վթարների, ՃՏՊ-ների մեծ մասը չի արձանագրվում իրավապահ մարմինների կողմից: Բացի այդ, նորանշանակ նախարարը նաև հակասել է ինքն իրեն. ՃՏՊ-ների քանակը 2019-ի հետ համեմատելիս հայտնեց, որ 2022-ին արձանագրվել է 4008 ՃՏՊ, քիչ հետո՝ արդեն 2021-ի հետ համեմատելիս, ՃՏՊ-ների քանակը «դարձավ» 4009: Մեկ այլ դեպքում, խոսելով վիրավորների մասին, Վահե Ղազարյանը հայտարարեց. «Վիրավորները՝ 646 (նկատի ունեմ, թե որքանով է կրճատվել քանակը,- խմբ.) կամ 975 տոկոսով: 2022 թվականին՝ 6155, 2019 թվականին՝ 6008»: Այսպիսով, ստացվում է՝ նորանշանակ նախարարը ոչ ճիշտ թվեր է ներկայացնում հանրության դատին:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Էդուարդ Աղաջանյանը մեկուսացել է թիմակիցներից, նրանց հետ շփումները հասցրել է մինիմալի: Պատգամավորը չի մասնակցում նաև ներկուսակցական քննարկումներին: Նա վերջերս հրաժարվեց ԵԱՀԿ ԽՎ Ազգային ժողովի պատվիրակության ղեկավարի իր պաշտոնից, իսկ Արտաքին հարաբերությունների հանձնաժողովը դեռ ղեկավարում է, չնայած նրան արդեն փոխարինողի անուն կա՝ Սարգիս Խանդանյան: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Աղաջանյանը մտադիր է լքել Հայաստանը եւ շարունակել իր գործունեությունը որպես դեսպան: ՔՊ-ամերձ մեր աղբյուրները հայտնեցին, որ թիմակիցներն Աղաջանյանից ուղիղ հետաքրքրվել են՝ ինչ է մտադիր անել, ուզում է արդյոք դեսպանի աշխատանքի անցնել, սակայն նա խուսափողական պատասխաններ է տվել եւ ոչինչ հստակ չի ասել: Թիմակիցներին զարմացրել է Աղաջանյանի այս պահվածքը, քանի որ նա հիմնականում այնքան է ընկել իր ակտիվությանը: Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ Աղաջանյանը խուսափում է այս հարցով որեւէ քննարկում ունենալ անգամ Փաշինյանի հետ: Պատգամավորը նախընտրում է միայն խորհրդարանում քննարկում-հանդիպումներ ունենալ դրսից Հայաստան ժամանած պաշտոնյաների կամ պատգամավորների հետ, իսկ կուսակցական քննարկումներից խուսափում է. եթե անգամ մասնակցում է թիմակիցների հետ որեւէ հանդիպման, ապա շատ չեզոք է իրեն դրսևորում:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ մարդու իրավունքների արդեն նախկին պաշտպան Քրիստինե Գրիգորյանին Արտաքին հետախուզական ծառայության պետի պաշտոնում առաջադրելու հարցում մեծ դերակատարում են ունեցել Հայաստանում հավատարմագրված մի քանի դեսպաններ: Մասնավորապես, նրանցից մի քանիսը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին ասել են, որ եթե Քրիստինե Գրիգորյանը նշանակվի այդ պաշտոնին, ապա իրենք ամեն կերպ կօգնեն Հայաստանին, կնպաստեն նորաստեղծ այդ կառույցի զարգացմանը: Եվ հենց այդ ամենը հաշվի առնելով ու փոխադարձ քննարկումների արդյունքում եւ համաձայնությամբ թեկնածությունը հենց Գրիգորյանի վրա է կանգ առել, որից հետո էլ Քրիստինե Գրիգորյանը հրաժարական է տվել օմբուդսմենի պաշտոնից: Նկատենք՝ անկախ կառույց գլխավորած Քրիստինե Գրիգորյանը պատրաստվում է դառնալ վարչապետին ենթակա մարմնի՝ Արտաքին հետախուզական ծառայության պետ: Այդ կառույցի կանոնադրության մեջ հստակ նշված է. «Ծառայության պետն անմիջականորեն ենթակա եւ հաշվետու է Վարչապետին», իսկ Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է:



Նախորդ տարի սկսված ռուս-ուկրաինական պատերազմն ու Ռուսաստանում հայտարարված մոբիլիզացիան ազդեցություն են ունեցել Հայաստանի անշարժ գույքի շուկայի վրա: Մեր երկրում բնակարանների վարձավճարները կրկնակի բարձր են: Silver Rea անշարժ գույքի գործակալության հիմնադիր-տնօրեն Անդրանիկ Հարությունովի խոսքով՝ Երևանում վատ պայմաններով՝ հին վերանորոգումով, չգազաֆիկացված բնակարանի վարձավճարը սկսում է ամսական 200 հազար դրամից: «Իսկ նորմալ պայմաններով բնակարանի վարձավճարը սկսում է 300 հազար դրամից, եթե կահույք, տեխնիկա կա: Օրինակ՝ Արաբկիր վարչական շրջանում 1-2-սենյականոց բնակարանների վարձավճարը սկսում է 400 հազար դրամից, Նոր-Նորքում՝ 300 հազար դրամ: Ամեն դեպքում, 150 հազար դրամով բնակարան գտնելն այսօր բարդ է», - «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում իրավիճակը նեկայացրեց անշարժ գույքի գործակալը: Մեր զրուցակցի խոսքով՝ չնայած այս ամենին՝ վերջին երկու ամիսների ընթացքում անշարժ գույքի շուկան (վարձակալության ոլորտը) պասիվացել է, բնակարաններ կան, որոնք ազատ են մնում. Հայաստան ժամանած ռուս քաղաքացիների մեծ մասը, որոնք հեռավար են աշխատում, տուն, բնակարան է վարձում քաղաքին հարակից բնակավայրերում Արվյանում, Չարենցավանում:



ՌՈՒՄԱԲԵՐ ԶԿԱՆ

ԱՅՍ ԱՄԵՆԸ ՆՄԱՆ Է 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

«Նույնիսկ մտովի հնարավոր չէ դասկերացնել այն ամենը, ինչ այժմ կատարվում է Արցախում, երբ սարակաճ կենցաղային խնդիրներն անգամ անլուծելի են»:



Արցախում ամենից շատն այս պահին երեխաների իրավունքներն են ոտնահարված:

Ի՞նչ են ընդհանրապես անում հայաստանյան իշխանությունները Լաչինի միջանցքը բացելու համար:

Մեր գրուցակցի համոզմամբ՝ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը խուսափում է բոլոր այն հարթակներից, որտեղ հնարավոր է խոսել Արցախի այսօրվա իրավիճակից:

«Ժողովուրդ» օրաթերթը գրուցել է Արցախի «Արդարություն» խմբակցության պատգամավոր Սեդաքսե Զակոբյանի հետ:

Տիկին Զակոբյան, ի՞նչ իրավիճակ է Արցախում:

Նույնիսկ մտովի հնարավոր չէ պատկերացնել այն ամենը, ինչ այժմ կատարվում է Արցախում:

հեշտ է այս ամենը պատկերացնելը, բայց Արցախում բառիս բուն իմաստով աղետ է: Աղետ է, որովհետև ոչ թե մարդիկ հարմարվել են որեւէ բանի հետ, ոչ, այլ որովհետև մարդիկ գիտակցում են, որ պայքարի այս փուլում, այո, նաեւ իրենց առողջական խնդիրներն են դրել հետոյի լուծման համար:

Արցախում ամենից շատն այս պահին երեխաների իրավունքներն են ոտնահարված: Կրթությունից զրկված են նրանք: Այս մասով ի՞նչ կարող եք ասել:

Նրանք զրկված են բոլոր տեսակի հնարավորություններից, եւ ոչ մի բան չկա զբաղվելու: Ես չգիտեմ, թե անգամ ինչպես նկարագրեմ, որ պատկերացնել հնարավոր լինի իրավիճակը: Կարծում եմ այս ամենն անպատկերացելի է: Ես իրոք չեմ ուզի, որ որեւէ մեկը մեր հայրենակիցներից իր կաշվի վրա զգար այն, ինչ հիմա զգում են մեր հայրենակիցները եւ մանուկները:

Նրանք զրկված են կրթությունից, անգամ տանից դուրս չեն գալիս:

Իսկ ի՞նչ են անում հայաստանյան իշխանությունները Լաչինի միջանցքը բացելու համար:

Սա հռետորական հարց է, որ ամեն օր ես ինքս ինձ տալիս եմ: Ես համոզված եմ, որ նրանք ոչ միայն Արցախի, այլեւ Զայաստանի անվտանգային հարցերի առումով որեւէ բան չեն անում: Որտե՞ղ ենք տեսնում, որ, իբրեւ թե, բոլոր հարթակներում խոսում են: Դա սուտ է, իմիտացիա է, որը 33 իշխանությունները բավական երկար ժամանակ ստեղծել են: Դա շատ նման է 44-օրյա պատերազմին՝ մի տարբերությամբ, որ ռումբեր չեն պայթում: Մենք այստեղ շրջափելի զգում ենք պատերազմը, իսկ Փաշինյանի իշխանությունը խուսափում է այն հարթակներից, որտեղ պետք է խոսեն Արցախի կարգավիճակի մասին:

Ձրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐՈՂՈՍՅԱՆԸ



ՀԵՌԱՑԱՎ



«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ հայտնի դարձան, թե ինչու հրաժեշտ տվեցին գլխավոր հարկադիր կատարող Սերգեյ Մեղոյանին: Մեր տեղեկություններով՝ Մեղոյանին հրաժեշտ են տվել այն պատճառաբանությամբ, որ ճիշտ կլինի հարկադիր կատարողը ծառայության ներսից որեւէ մեկը լինի, այլ ոչ թե համակարգից դուրս, օտար անձ: Արցախում որոշել են ՊԵԿ Նախագահ Ռուստամ Բադալյանի ընկերոջ՝ Սերգեյ Մեղոյանին հրաժեշտ տալ՝ գլխավոր հարկադիր կատարողի պաշտոնին նշանակելով Արսեն Մարտիրոսյանին: Ի դեպ, Մեղոյանը այդ պաշտոնին կարողացավ նշանակվել միայն «Զարկադիր կատարման ծառայության մասին» օրենքում կատարված փոփոխության շնորհիվ, որը հնարավորություն տվեց գնդապետից ցածր կոչում ունեցող Մեղոյանին նշանակվել այդ պաշտոնում: Նրա համար դա սպառնալից էր հենց Ռուստամ Բադալյանը:

ԳՈՐԾԸ ՄԵՂԱՆԻՆ Է

Աժ «Զայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանի նկատմամբ քրեական հետապնդում սկսելու վերաբերյալ գործը գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի սեղանին է: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԱԱԾ-ի կողմից նախաձեռնված քրեական վարույթը ուղարկվել է Գլխավոր դատախազություն:

Տեղեկությունը փորձեցինք պարզել Գլխավոր դատախազությունից, որտեղից հայտնեցին. «Այս պահին նման տեղեկություն չկա»:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Գեղամ Մանուկյանը իրավապահների ուշադրության կենտրոնում հայտնվեց քուրդ ազատամարտիկների թուրքիայում հայտնվելու դեպքով արած հայտարարությունների համար: «Աժ կանոնակարգ» օրենքի 108-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցել կամ ազատությունից զրկել հնարավոր է միայն Ազգային ժողովով՝ դատախազի միջնորդության հիման վրա: Դա է պատճառը, որ գլխավոր դատախազը նրա հարցով ես պետք է մտնի Աժ:

ՔՐԻՄՍԻՆԱ ՍՈՒՇԵՂՅԱՆ

ԼՈՒՈՋ ԽՆԴԻՐ

2020Թ.-ԻՑ ՀԵՏՈ ՊՆ 4 ՆԱԽԱՐԱՐ Է ՓՈԽՎԵԼ

Իգնատիանոսյան ներկայացուցիչները թեւ մեսաղես ամենաբարձր մակարդակով հայտարարել են բանակի ռեֆորմների, դիրեկտի կահավորման մասին, սակայն Ազատ գյուղի գործառնասի հրդեհը, որը 15 զինվորի կյանք խլեց, ցույց տվեց, որ բանակում շատ լուրջ խնդիրներ կան, եւ մեր զինվորները իրենց ծառայությունն իրականացնում են, մեղմ ասած, ոչ դասաճառ դասաճանաչում:

Այս առիթով ArmLur.am-ը գրուցել է ռազմական փորձագետ Մեր Զակոբյանի հետ:

Պարոն Զակոբյան, պատերազմից արդեն շուրջ երկու-երեք տարի անցել է. այս ժամանակահատվածը բավարար չէ՞ր, որ դիրքերը կահավորեին, զինվորների համար ծառայության պատշաճ պայմաններ ապահովեին:

Ժամանակը պետք է որ բավարար լինի, իսկ թե գործադրված ջանքերը որքանով են բավարար եղել, դա արդեն հարց է: Դիրքային կահավորումը պետական գաղտնիքի հետ է առնչվում, ոչվար է ասել՝ ինչ է աշխատանքը է տարվում, փակ ինֆորմացիայի հետ գործ ունենք, բայց,

դատելով երբեմն սպրոդոլ ինֆորմացիայից, ամեն դեպքում, դիրքերի կահավորման լուրջ խնդիր կա: Խնդիրը երկու մասի կարելի է բաժանել՝ մարտական դիրքերի կահավորում եւ մարտական դիրքերը սպասարկող անձնակազմի կենցաղային պայմաններ: Երկու-երեք տարին բավարար ժամանակ էր, բայց ունենք այն, ինչ ունենք:

Իշխանության ներկայացուցիչները վստահեցնում են, որ պետությունն ունի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ բանակի ռեֆորմների համար, տարբեր միջոցառումների համար մեծ գումարներ են հատկացվում, Պապիկյանը վստահեցնում էր՝ բանակը ոչնչի կարիք չունի: Եթե գումարը կա, ինչու՞ պատշաճ աշխատանք չի տարվել առաջնագծի կահավորման ուղղությամբ:

Կարելի է երկար խոսել այս մասին, բայց կարճ ասենք՝ կառավարման արդյունավետության խնդիր կա: 2020թ.-ից հետո ՊՆ 4 նախարար փոխվեց, այսինքն՝ մի նախարարը կարողացել է պաշտոնական գաղտնիքի հետ է առնչվում, ոչվար է ասել՝ ինչ է աշխատանքը է տարվում, փակ ինֆորմացիայի հետ գործ ունենք, բայց, եկել է դատարկ տեղ: Կառավարման

խնդիր է՝ ամենալայն իմաստով, որն արտացոլվում է նաեւ պաշտպանական ոլորտում:

Երբ տարբեր փորձագետներ կամ ընդդիմության ներկայացուցիչներ հայտարարում էին, որ առաջնագծը կահավորված չէ, հենց Նիկոլ Փաշինյանը մեղադրում էր այդ մարդկանց, թե տեղեկություն են տալիս թշնամուն:

Պաշտպանական ոլորտը շատ նուրբ ոլորտ է, միշտ առնչվում է պետական գաղտնիքի հետ: Պետք է միջին տարբերակ գտնել, որ ե՞լ թշնամուն տեղեկություն չտրվի, ե՞լ քաղաքացիական հասարակության հսկողությունը առկա լինի: Հեշտ է ասել՝ պետական գաղտնիք է, ու ոչինչ չասել, բայց, մյուս կողմից էլ, հակառակ ծայրահեղության մեջ պետք չէ ընկնել ու բոլոր նկարահանող սարք ունեցող մարդկանց թողնել դիրքեր. դա էլ ճիշտ չէ: Պետք է ունենանք պետական համակարգ, որը վերահսկողություն կիրակալանալի: Պետք են նաեւ հասարակության կայացած մարմիններ, որոնք կհսկեն գործընթացը. հիմա, ցավոք, մեր երկրում չկա այս ամենը:

ՔՐԻՄՍԻՆԱ ՍՈՒՇԵՂՅԱՆ





ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՐԵՐ

ՓԱՍՏԱԹՎԹԵՐ ԿԵՂԾԵԼՈՒ ՀԱՍԱՐ

Իջեան համայնքի մի քանի բնակիչներ «Ժողովուրդ» օրաթերթին բողոքել են, որ «Հայբուսակ» համալսարանի Իջեանի մասնաճյուղում տարիներ շարունակ սովորել են, ուսման վարձավճարները մուծել, սակայն դիպլոմներ չեն ստացել: Այդ կապակցությամբ գրավոր հարցում են ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանին: Քննչական կոմիտեից ստացված պատասխանում նշված է. «Երեւանի «Հայբուսակ» համալսարանի՝ Իջեան քաղաքի ներկայացուցչության տնօրենի պաշտոնը զբաղեցրած անձի գործունեության վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում է (18.04.2003 թվականին ընդունված է 01.07.2022 թվականին ուժը կորցրած) ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված քրեական վարույթ: Երեւանի «Հայբուսակ» համալսարանի Իջեան քաղաքի ներկայացուցչության տնօրենի պաշտոնը զբաղեցրած անձը ներգրավվել է որպես մեղադրյալ (18.04.2003 թվականին ընդունված է 01.07.2022 թվականին ուժը կորցրած) ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով: Հիշյալ քրեական վարույթների նախաքննությունը շարունակվում է»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿՓՈՒՆՀԱՏՈՒՑԻ ԾԱԽՍԵՐԸ

Հայաստանի կառավարությունը կփոխհատուցի Ջերմուկի հյուրանոցների կոմունալ ծախսերը: Նշենք, որ նախորդ տարվա սեպտեմբեր ամսին տեղի ունեցած ռազմական գործողությունները մեծ ազդեցություն են ունեցել Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում հյուրանոցների և հյուրատների գործունեության վրա: Հյուրանոցներն ու հյուրատները մինչև 2 ամսով դադարեցրել էին իրենց գործունեությունը՝ չընդունելով զբոսաշրջիկներին:

Ավելին, ըստ ՊԵԿ-ի՝ Ջերմուկում մոտ 3 անգամ նվազել է հյուրանոցային, հյուրատնային գործունեություն իրականացնող տնտեսավարողների իրացման շրջանառությունը:

Նրանց մեծ մասը ընդհուպ մինչև 2 անգամ նվազեցրել էր նախկինում գործող ծառայությունների արժեքը: Կառավարությունը մտադիր է միանվագ աջակցություն տրամադրել Ջերմուկում 2022 թվականի սեպտեմբերի 11-ի դրությամբ կացության կազմակերպում իրականացնող տնտեսավարողներին՝ 2022 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների էլեկտրաէներգիայի և գազի ծախսի հանրագումարի 100 տոկոսի չափով:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ փոխհատուցում ստանալու են Ջերմուկում կացության կազմակերպման գործունեություն իրականացնող մոտ 20 տնտեսավարող: Գազի և էլեկտրաէներգիայի փոխհատուցման ծախսը՝ ըստ նախնական հաշվարկների, չի գերազանցելու 50-60 մլն դրամը:

ՍՅՈՒՆԷ ՀԱՄԱՐՉՈՒՄՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՓԱՏՏԵՐ՝ ԱԴԻԲԵՋԱՆԱԿԱՆ ԱԳՐԵՄԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կանադայի Համայնքների դպրատնի արտաքին հարաբերությունների և միջազգային զարգացման մեծակամ հանձնաժողովը հունվարի 25-ին գումար է երկու առանձին միսեր:

Ինչպես տեղեկանում ենք ՀՀ Բյուրոյի Հայ դատի կենտրոնական գրասենյակի տարածած հաղորդագրությունից, նիստերը գումարվել են՝ համաձայն հանձնաժողովի կողմից նախորդ շաբաթ միաձայն ընդունված որոշման: Որոշման նախագիծը ներկայացվել էր «Քվեբեկի բլոկ» խմբակցության անդամ Սթեֆան Բերգերոյի կողմից, որը պահանջել էր նվազագույնը երեք հանդիպում, որոնց ընթացքում հանձնաժողովի անդամները հնարավորություն կունենան լսելու Արցախի Հանրապետությունը ներկայացնող անձանց, ինչպես նաև փորձագետների և կանադահայ համայնքի ներկայացուցիչների:

Կանադական խորհրդարանում կայացած նիստերի բացառիկ բնույթն ու պատմականությունն այն է, որ առաջին անգամ Արցախի Հանրապետության պետական ներկայացուցիչները հանդես եկան կանադական խորհրդարանի առջեւ և ներկայացրին Արցախի բնակչության պայքարը՝ հանուն արժանապատիվ կյանքի: Առաջին հանդիպմանը մասնակցել են ՀՀ Բյուրոյի Կանադայի հանձնախմբի համանախագահ Շահեն Միրաքյանը, դոկտոր Թալին Փափազյանը, Ամերիկայի Միացյալ Նահանգներում և Կանադայում Արցախի Հանրապետության ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյանը և Արցախի մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանը: Երկրորդ հանդիպմանը մասնակցել են «Միջազգային ճգնաժամային խմբի» Հարավային Կովկասի հարցերով ավագ վերլուծաբան Օլեսյա Վարդանյանը և Վիդուո-րի համալսարանի իրավունքի պրոֆեսոր Քրիստոֆեր Վոթերսը:

Հրավիրյալները, յուրաքանչյուրը՝ իր մասով, հանգամանորեն անդրադարձել են ստեղծված իրավիճակին: Կարեւորվել



է Կանադայի կողմից Ադրբեջանի վրա միջազգային ճնշման իրականացումը, որպեսզի վերջինս վերջ տա իր ցեղասպան քաղաքականությանը:

Արցախի Հանրապետության ներկայացուցիչները հանձնաժողովի անդամներին ներկայացրել են իրական փաստեր՝ կապված մարդասիրական ծանր հետեւանքների և Ադրբեջանի ցեղասպանական ագրեսիայի հետեւանքների հետ, ինչպես նաև Արցախի Հանրապետու-

թյան առաջնահերթություններն ու ազատ ու անկախ կյանքի տեսլականը:

Հաղորդագրության մեջ նշվում է, որ ՀՀ Բյուրոյի Կանադայի հանձնախումբը շնորհակալություն է հայտնում խորհրդարանական հանձնաժողովի անդամներին այս կարեւոր հարցում օժանդակության համար և հաստատական է շարունակելու ջանքերը՝ Արցախի շրջափակմանը վերջ դնելու և Արցախի ծայր լսելի դարձնելու ուղղությամբ:

ԼՈՒՐԵՐ

ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՈՒՆԱԿՎՈՒՄ Է

2019թ.-ի ամռանը Իջեան քաղաքում փայտի բիզնեսով զբաղվողները փակել էին Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհը, որի հետեւանքով ոստիկանության հետ բախումներ եղան, Երեւանից իրավապահների մեծ ուժեր էին Իջեան տարվել: Ներկայումս Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Իջեան քաղաքի նստավայրում այդ գործով շարունակվում է Իջեան խոշորացված ինքնապաշտպանության 20 բնակչի դատավարությունը: Նրանց առաջադրված մեղադրանքները մեղմացրել են, նրանք դատվում են ոչ թե իշխանության ներկայացուցիչ ոստիկաններին դիմադրություն ցույց տալու, այլ խուլիգանության մեղադրանքով: Իջեան քաղաքի բնակիչներն ասում են, որ 2019 թվականին Նիկոլ Փաշինյանը այդ կերպ ոչ թե պայքարում էր Տավուշի մարզում ապօրինի անտառահատումների դեմ, այլ նման ձեռով փայտի շահավետ բիզնեսը դարձրեց իր մտերիմներից: Իջեանի և Սեւքարի անտառատնտեսություններում ապօրինի ծառահատումները շարունակվում են: Նման դեպքերը քիչ չեն նաև Բերդ համայնքի անտառները տնօրինող Արծվաբերդի անտառատնտեսությունում: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Իջեան քաղաքի նստավայրում ընթացանում է Իջեան համայնքի Գանձաքար գյուղի բնակիչ, 1991թ. ծնված Ռոբերտ Ներկարայանի դատավարությունը: Նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ 2022թ. փետրվարի 4-ի լույս 5-ի գիշերը «Ուրալ» մակնիշի ավտոմեքենայով «Հայաստան» ՊՈԱԿ-ի «Արծվաբերդի անտառատնտեսություն» մասնաճյուղի Նավուրի անտառապետության թիվ 1 պահաբաժնի տարածքում գտնվող «Խաչքուլախ» անտառամասից ապօրինի, առանց թույլտվության Իջեան համայնքի Գանձաքար բնակավայր է տեղափոխել ընդամուր 7.68 խմ ծավալով թվով 31 հատ հաճարենի տեսակի գերաններ: Ռ. Ներկարայանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 387-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով: Նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չեռանալու մասին ստորագրությունը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ Տավուշ

ՄՈՒՏՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի քաղաքացիները հնարավորություն կունենան Արաբական Միացյալ Էմիրություններ մեկնել առանց մուտքի արտոնագրի:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ կառավարությունն այսօրվա նիստին հավանություն տվեց Հայաստանի ու ԱՄԷ-ի կառավարությունների միջև քաղաքացիների մուտքի արտոնագրի պահանջի վերացման մասին համաձայնագրի կնքման առաջարկությանը:

Նշենք, որ մուտքի ազատականացման գործընթացը մեկնարկել էր 2017 թվականին, հետո ինչ-ինչ պատճառով կանգ էր առել: Նախորդ տարվա դեկտեմբերին արդեն գործընթացը վերսկսվեց «ԱՄԷ-ում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեության կանոնակարգման մասին» փոխըմբռնման հուշագրի ստորագրմամբ:

ՍՅՈՒՆԷ ՀԱՄԱՐՉՈՒՄՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 12-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:



ՀՈՒՐԱՆՆԵՐ

ՄԻՄՖՈՆԻԿ ԵՎ ԱՊՐԱՄՈՒՄԻՔԸ՝ 17 ՏԱՐԵԿԱՆ

Հունվարի 25-ին հրավիրված համերգով Հայաստանի դեսական սիմֆոնիկ նվագախումբը նույն հիմնադրման 17-ամյակը:

Երեկոն ղեկավարում էր նվագախմբի գեղարվեստական ղեկավար Ե. Գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը: Ծիշտ 17 տարի առաջ՝ 2006 թվականի հունվարի 25-ին, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի առաջին բեմելն էր: Այն ժամանակ 18-ամյա Սերգեյ Սմբատյանը, համախմբելով իր երաժիշտ ընկերներին, հիմնադրեց նվագախումբ, որը հետագա տարիներին կարողացավ մեծ ճանաչում ձեռք բերել Հայաստանում և նրա սահմաններից դուրս, սիրվել երաժշտասերների կողմից՝ նրանց ներկայացնելով դասական երաժշտության հարուստ երկացանկ և աշխարհահռչակ երաժիշտների կատարումներ: Ստեղծման օրից նվագախմբի թիվ մեկ առաքելությունը բարձր կատարողական որակ և միջազգային չափանիշներ ապահովելն է, ինչը կյանքի է կոչվում հետետղական աշխատանքի շնորհիվ: Անցած տարիների ընթացքում նվագախումբն ունեցել է հարյուրավոր համերգներ, այդ թվում՝ շուրջ 100 համերգ Հայաստանից դուրս: Հյուրախաղերով է հանդես եկել մի քանի տասնյակ երկրներում՝ Ֆրանսիայում, Իտալիայում, Գերմանիայում, Ավստրիայում, Չեխիայում, Մեծ Բրիտանիայում, Լեհաստանում, Նիդերլանդներում, Բելգիայում, Իսպանիայում, Մալթայում, Չինաստանում, Լիբանանում, Արաբական Էմիրություններում, Իսրայելում, Ռուսաստանում և այլն: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբն իր արտասահմանյան համերգային շրջագայությունների ընթացքում մշտապես կատարում է հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ՝ այդպիսով հանրահռչակելով ե՛լ հայկական կոմպոզիտորական ժառանգությունը, ե՛լ ներկայացնելով հայ կատարողական բարձր արվեստը: Ձայնագրվել և թվայնացվել են հայ կոմպոզիտորների կամերային և սիմֆոնիկ հարյուրավոր ստեղծագործություններ, ինչը հնարավորություն է տալիս մեր երաժշտական ժառանգությունը սերունդների համար պահպանել ժամանակակից ձևաչափով, ինչպես նաև հանրայնացնել աշխարհում: Հայաստանի պե-




տական սիմֆոնիկ նվագախումբը կարելի է համագործակցությունը դասական երաժշտության մեծ լսարան ունեցող միջազգային հարթակների հետ՝ Medici.tv, Euronews, Classic.fm, Mezzo TV և այլն, որոնք վերջին տարիներին բազմիցս հեռարձակել են Սիմֆոնիկ կատարումները: 17-ամյակի համերգին նվագախումբը ներկայացրեց Պյոտր Չայկովսկու ստեղծագործությունները՝ Ղաջնամուրի թիվ 1 կոնցերտը և թիվ 4 սիմֆոնիան: Որպես մենակատար հանդես եկավ դաշնակահար Սիրույակ Կուլտիշեյը: Վերջինս երաժշտական ամենամեծ նախագծերից մեկի՝ Classical Piano միջազգային մրցույթի 2021թ. հաղթողն է և, ի դեպ, Դուբայում կայացած Classical Piano մրցույթի հաղթող է դարձել՝ երրորդ և չորրորդ փուլերում ելույթ ունենալով Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի նվագակցությամբ: Մշակութային ծրագրերի

իրականացումից բացի, նվագախումբը մշտապես ձգտում է իրացնել իր սոցիալական պատասխանատվությունը: Այս ուղղությամբ 2023 թվականից նվագախումբը վատ լսող երեխաների մայրերի «Հավատ» հասարակական կազմակերպության հետ սկսում է մի նշանակալի նախագիծ, որով իր նպաստն է բերելու լսողության խնդիրներ ունեցող երեխաների աջակցությանը: 17-ամյակի համերգը նախորդում է մեծ հյուրախաղերին: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը փետրվարին ելույթներով հանդես կգա Միացյալ Թագավորությունում: Նախատեսված է 10 համերգ տարբեր քաղաքներում: Միացյալ Թագավորությունում խստապահանջ ունկնդիրը հնարավորություն կստանա, ի թիվս այլ գործերի, վայելելու նաև հայ մեծ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները:

ԼՈՒՐԵՐ

ԱԶԱԿՑՈՂ ՈՒՂԵՐՉՆԵՐ



Ավստրալիայի բաց առաջնության կիսաեզրափակչի մասնակից Կարեն Խաչանովն ասում է, որ թենիսի առաջնության կազմակերպիչները իրեն չեն ասել, որ դադարեցնի Արցախի աջակցող ուղերձներ գրել: Հայկական ծագում ունեցող ռուսաստանցի 26-ամյա թենիսիստը խաղից հետո հեռուստատեսային տեսախցիկի օբյեկտիվի վրա գրել է այնպիսի հաղորդագրություններ, ինչպիսիք են՝ «Ամուր մա, Արցախ» և «Շարունակիր հավատալ մինչև վերջ: Արցախ, դիմացիր»: Լրատվամիջոցը նշում է, որ այսպիսով Խաչանովն իր աջակցությունն է հայտնել Արցախի ժողովրդին, որը մեկ ամիս է՝ Արդեշանի կողմից շրջափակման մեջ է:

«Ես հայկական արմատներ ունեմ հայրական կողմից, պապիկիս, Լույսիկ մորս կողմից, ես կիսով չափ հայ եմ: Ես պարզապես ուզում էի իմ ժողովրդին ցույց տալ ուժ և աջակցություն», - քառորդ եզրափակիչից հետո ասել է Խաչանովը լրագրողներին: Կարեն Խաչանովի հաղորդագրություններն Արդեշանի թենիսի ֆեդերացիայի զայրույթն են առաջացրել: Նրանք Խաչանովի գործողությունները որակել են որպես «ասելության գործողություն» և գրություն են ուղարկել Թենիսի միջազգային ֆեդերացիային՝ պահանջելով միջոցներ ձեռնարկել թենիսիստի դեմ: Խաչանովին ոչ ոք չի ասել, որ նա դադարեցնի հաղորդագրություններ գրելը: «Ես դրա մասին ոչինչ չեմ լսել, առայժմ ոչ», - ասել է Խաչանովը: Խաչանովին է միացել նաև Մեյբլուրի հայ համայնքը, որը Ավստրալիայի բաց առաջնությանն է եկել Արցախի դրոշմներով:

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՓԱՐԻԶՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Ֆրանսիայի Կանխարգելիչ հնագիտական ուսումնասիրությունների ազգային ինստիտուտի հրավերով հունվարի 20-21-ը Փարիզում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում, կայացել է «Եվրոպական հնագիտության օրեր» ծրագրի համակարգողների առաջին համաժողովը: Հայաստանից համաժողովին մասնակցել է ծրագրի համակարգող, ԿԳՄՆ ոլորտային և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության ղեկավար Կարոյան Վահագնը: Համաժողովի անցկացվել է 4 թեմատիկ համաժամանակյա ֆեմարկուսներով՝ «Գերակասարների ակտիվացում», «Հաղորդակցություն», «Հանրային մասնակցություն» և «Եվրոպական հնագիտության օրերի աղագան» թեմաներով:

«Հանրային մասնակցություն» թեմատիկ քննարկումը վարել է արդյունքները համաժողովի մասնակիցներին և ներկայացրել ՀՀ ներկայացուցիչը: Քննարկման ընթացքում ներկայացվել են Հայաստանում իրականացված միջոցառումները, շեշտադրվել է կարևորվել են երիտասարդների և դպրոցականների մասնակցությունն ու սահմանափակ կարողություններով անձանց ներգրավումը ծրագրին: Գործընկերների հետ քննարկվել են հետագա համագործակցության ծրագրեր, մասնավորապես՝ Հայաստանի անդամակցության հարցը Եվրոպական հնագիտական խորհրդին: Նշենք, որ «Եվրոպական հնագիտության օրեր» ծրագիրը նախաձեռնել է Ֆրանսիան, որին հետագայում միացել է 18 երկիր:

Հայաստանը ծրագրին միացել է 2022 թվականին: Այն նշվում է յուրաքանչյուր տարի՝ հունիսին: 2022 թ. հնագիտական միջոցառումների շարքով ծրագրում ներգրավվել են Հայաստանի Հանրապետության ԿԳՄՆ նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն», «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ները, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը, «Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ-ը: 2023 թ. «Եվրոպական հնագիտության օրեր» ծրագրի միջոցառումների ցանկն առաջիկայում հասանելի կլինի նախարարության պաշտոնական կայքում:


● Հունվարի 28-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Մորաքույրը՝ Փարիզից» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-5000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:



Էջը՝ ՈՂՋԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Վարձը չմուծելու համար անջատել են լույսը՝ հաշվի չառնելով, որ սանն անչափահաս երեխա կա: Ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:
Ռախսա Միտիցյան (34 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. «Յայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից բաժանորդի էլեկտրամատակարարումը դադարեցնելու դեպքերը սահմանված են Ձեզ հետ կնքված պայմանագրով, մի շարք այլ իրավական ակտերով: Մատակարարն իրավունք ունի դադարեցնելու Ձեր տան էլեկտրամատակարարումը, եթե արդեն իսկ սպառված էլեկտրաէներգիայի դիմաց կանոններով եւ պայմանագրով սահմանված ժամկետներում եւ կարգով վճարումներ չեն կատարվել բաժանորդի կողմից, ընդ որում՝ վճարման համար հատկացված ժամկետի խախտման դեպքում մատակարարն իրավունք ունի դադարեցնել Ձեր էլեկտրամատակարարումը առնվազն 3 օր առաջ հեռուստատեսությամբ կամ սպառողին հասու այլ ձեւերով (հայտարարություն փակցնելով ջջամուտքերում, փոստային բաժանմունքներում եւ այլն) զգուշացնելուց հետո: Պարտքի առկայության դեպքում մատակարարը չպետք է դադարեցնի Ձեր տան էլեկտրամատակարարումը, եթե Դուք ներկայացրել եք մատակարարի համար ընդունելի վճարման երաշխիքներ կամ նրա հետ կազմել եք պարտքի մարման ժամանակացույց: Դուք կարող եք ներկայանալ տարածքային սպասարկման գրասենյակ, հայտնել չվճարման պատճառները եւ խնդրել՝ կնքելու վճարման ժամանակացույց, որով հնարավորություն կստանաք մաս առ մաս կատարելու կուտակված պարտքի վճարումները: Պետք է նկատի ունենալ, որ պարտքի մարման ժամանակացույցի խախտման դեպքում էլեկտրամատակարարումը կրկին կարող է դադարեցվել:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

«ԺՊՂՎՈՒՐԳ». Այն դեպքում, երբ Ձեր կողմից պարտքը մարելու մասին վճարման անդորրագիրը մատակարարին ներկայացնելուց հետո վերջինս վերոնշյալ ժամկետներում չի վերականգնել էլեկտրամատակարարումը, ապա դա կդիտվի խախտում մատակարարի կողմից:

ԿՎՐԳ

ՀԱՐՑ. Քուռում ֆնուբյունս անադարացիորեն անբավարար են գնահատել. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:
Թեմիկե Ավետիսյան (20 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Մինչ բողոքարկելը անհրաժեշտ է պարզել, թե արդյոք ավարտական քննության ընթացքը ձայնագրվում էր, թե ոչ: Եթե այն ձայնագրվում էր, ապա Դուք իրավունք ունեք դիմել եւ ստանալ ավարտական քննության Ձեր պատասխանի ձայնագրությունը եւ ուսումնասիրել, թե որքանով է համապատասխանում տրված գնահատականը Ձեր պատասխանին: Բարձրագույն ուսումնական հաստատության ղեկավարը, ստանալով Ձեր գրավոր բողոքը, պարտավոր է դրա հիման վրա պետական քննությունն ընդունող հանձնաժողովում քննել այն եւ դրա վերաբերյալ կայացնել համապատասխան որոշում՝ բավարարելով կամ մերժելով այն: Բավարարվելու դեպքում ղեկավարը հանձնաժողովի համաձայնությամբ իրավունք ունի փոփոխելու կայացված որոշումը կամ նշանակելու նոր քննության օր: Ձեր բողոքը մերժվելու դեպքում այն կարող եք բողոքարկել ինչպես ըստ վերադասության, այնպես էլ դատարան:
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՊՂՎՈՒՐԳ». Բարձրագույն ուսումնական հաստատության սովորող բարձրագույն (հետբուհական) կրթության սուբյեկտ է, որն ունի մի շարք իրավունքներ եւ պարտականություններ: Այդ իրավունքների թվին է դասվում սովորողի՝ բողոքարկման իրավունքը: Բարձրագույն ուսումնական հաստատության սովորողն իրավունք ունի բողոքարկելու բարձրագույն ուսումնական հաստատության ղեկավարության կայացրած որոշումները, հրամաններն ու կարգադրությունները: Բողոքարկումը կատարվում է գրավոր ձեւով՝ բողոքն հասցեագրելով բարձրագույն ուսումնական հաստատության ղեկավարին: Բողոքն իր մեջ պետք է պարունակի Ձեր բոլոր առարկություններն ու դիտարկումները՝ կապված ավարտական քննության ժամանակ Ձեր պատասխանի հետ:

ԼՈՒՐ ԿՎՐԴ

Լուսանկարն արվել է Երեւանում



Քննչական կոմիտեի շենքի դիմաց երեկ ArmLur.am-ի տեսախցիկը ֆիքսել էր մեծ թվով ոստիկանների. այստեղ էին հավաքված 44-օրյա արցախյան պատերազմում զոհված զինծառայողների ծնողները, որոնք սեպտեմբերի 21-ին «Շաբլուր» գինվորական պանթեոնում բռնության էին ենթարկվել ոստիկանների կողմից: Օրեր առաջ նրանք հավաքվել էին Քննչական կոմիտեի շենքի առջեւ եւ արդար դատաքննություն էին պահանջում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել



«Հայմամուլ» ՓԲԸ հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

Subscription form with fields for Name, Surname, Address, and Phone Number. Includes a logo and contact information for 'People' newspaper.



«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 26.01.2023

Գլխավոր խմբագիր՝ ԶՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: